12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների /Արագած համայնքի համայնքապետարանի, Հարթավան համայնքի դպրոցի, Շենավան համայնքի նախակրթարանի և դպրոցի, Երեջատաի համայնքի համայնքապետարանի, Վարդենիս համայնքի համայնքապետարանի, Լուսազյուղ համայնքի համայնքապետարանի և Ապարան քաղաքի քաղաքապետարանի հետ համատեղ:												
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թալանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Զարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգչային համակարգին:												

Լիանա Մարգարյան
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտն մարզի զարգացման ծրագրի ղեկավար



5/11



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-641-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՅՈԹ ՀԱՄԱՅՆՔ-
ՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82147-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N 01/4524-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5131-11 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011 թվականի հուլիսի 26-ի N 01/10.1/2135 -11 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3420630 դրամ ընդհանուր արժողությամբ «Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներում շինանյութի տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Դելտա Ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2011 թվականի հուլիսի 17-ին կնքված՝ N WVA/APAR ADP/CM-11/003 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 3420630 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներում շինանյութի տրամադրում»

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Բարելավել Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքների ենթակառուցվածքների վիճակը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	«Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Թայվան» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտն մարզի Արագած, Շենավան, Ձորագլուխ, Եղիպատրուշ, Շողակն, Երևաշատի և Հարթավան համայնքներում: Բնագավառը՝ համայնքային
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3 420 630 դրամ:
7	Բարեգործությունն ստացողը	Արագածոտն մարզի Արագած համայնքի N2 դպրոցի հատակների վերանորոգում, Շենավան համայնքի խմելու ջրագծի վերանորոգում, Ձորագլուխ համայնքի բուժկետի վերանորոգում, Եղիպատրուշ համայնքի մշակույթի տան պատուհանների տեղադրում, Շողակն համայնքի տարական դպրոցի մշակույթի տան տանիքի վերանորոգում, Երևաշատի համայնքի Ե. Զարենցի անվան դպրոցի հատակների վերանորոգում, և Հարթավան համայնքի նկարչական խմբակի վերանորոգում:

8	Ծրագրի իրականացման տևողությունը	Հունիս 1 – Օգոստոսի 31, 2011թ.			
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում, սույն թվականի Հունիս-Օգոստոս ամիսներին մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.			
		N	Ծրագրերի անվանումը	Ժամկետները	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը
		1.	Արագածոտն մարզի Արագած համայնքի N2 դպրոցի հատակների վերանորոգում, Շենավան համայնքի խմելու ջրագծի վերանորոգում, Ձորագլուխ համայնքի բուժկետի վերանորոգում, Եղիպատրուշ համայնքի մշակույթի տան պատուհանների տեղադրում, Շողակն համայնքի տարական դպրոցի և մշակույթի տան տանիքի վերանորոգում, Երևաշատի համայնքի Ե. Զարենցի անվան դպրոցի հատակների վերանորոգում, և Հարթավան համայնքի նկարչական խմբակի վերանորոգում:	Հունիս – Օգոստոս, 2011թ.	3 420 630
		2.	Ընդամենը:		3 420 630
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	N	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը	Ձեռք բերվող ծավալները	Նախատեսվող գինը
		1.	Արագած համայնքի N2 դպրոց ՊՈԱԿ	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	412 310
		2.	Շենավան համայնքի խմելու ջրագիծ	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	1 099 500
		3.	Ձորագլուխ համայնքի բուժկետ	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	147 330
		4.	Եղիպատրուշ համայնքի մշակույթի տուն	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	441 294
		5.	Շողակն համայնքի տարական դպրոց և մշակույթի տան տանիք	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	625 890

		6.	Երևջատափ համայնքի Ե. Չարենցի անվան դպրոց	Վերանորոգման նախահաշիվ`Հավելված 1	412 310
		7.	Հարթավան համայնքի նկարչական խմբակ	Վերանորոգման նախահաշիվ`Հավելված 1	281 996
		8.	Ընդամենը:		3 420 630
		Շինանյութի մատակարարումն իրականացնող կազմակերպության հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականացվի կազմակերպության հետ կնքված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան 3 420 630 դրամ արժողությամբ:			
11	Օրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:			
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների /Արագած համայնքի N2 դպրոցի, Շենավան համայնքի համայնքապետարանի, և Ջորագյուլի համայնքի համայնքապետարանի, Եղիպատրուշ համայնքի համայնքապետարանի, Շողակն համայնքի համայնքապետարանի, Երևջատափ համայնքի Ե. Չարենցի անվան դպրոցի, և Հարթավան համայնքի համայնքապետարանի, հետ համատեղ:			
13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Օրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Օրագրերի պատասխանատուի և Տարածքային Ջարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: Օրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:			

Լիանա Սարգսյան
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտն մարզի զարգացման ծրագրի ղեկավար

11/10



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-642-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 3/3.8-2/82369-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 28-ի N ՀՔ/22/6865-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-6/5384-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱմերիՔերս» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (138 տեղ, 397 կգ ընդհանուր քաշով, 1482240.02 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5990 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐԱԽՄՈՆՅԱՆ

Բեռի բաշխման ցանկ
Ամերիքերս կողմից ԱՄՆ ՄՀՀ-ի միջոցով # AC015645
Օրային փոխադրում (air shipment) 186

23.07.2011թ.

Դերը	Նկարագրություն	Ստացող	Շեռ	Կադ	Բանալ	Քաշ LBS	Ծավալ CU.FT.	Գումարը
Միացյալ հայկական հիմնադրամ (Ամերիքերս)	Դեղեր	Քուշկյան Հարություն - առողջապահության նախարար	582413	Air 186-01	119	572	97	269 401,28
Միացյալ հայկական հիմնադրամ (Ամերիքերս)	Լատերիքին	Դազարյան Սյարսուկ - «Արարիկ» միացյալ սանկյան հիմնադրամ	236883	Air 186-02	1	44	4	179 694,72
Միացյալ հայկական հիմնադրամ (Ամերիքերս)	Դեղեր	Մարադյան Սրմեն - Ուսուցարանության ազգային կենտրոն	209401	Air 186-03	6	62	17	1 028 409,12
Միացյալ հայկական հիմնադրամ (Ամերիքերս)	Բժշկական նշանակության ապրանքներ	Քուշկյան Հարություն - առողջապահության նախարար	582413	Air 186-04	2	44	18	988,00
Միացյալ հայկական հիմնադրամ (Ամերիքերս)	Եշտանության ապրանքներ	Աբրահամյան Ռազմիկ - Պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ	319279	Air 186-05	9	96	48	2 892,50
Միացյալ հայկական հիմնադրամ (Ամերիքերս)	Բժշկական նշանակության ապրանքներ	Մարգարյան Բագրատ - Հայ օգնության ֆոնդ	526660	Air 186-06	1	56	10	854,40
Ընդամենը								1 482 240,02
						138	874	194



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-643-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-2/81998-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N ՀՔ/22/6662-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-6/5224-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականիսարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (11 տեղ, 501.8 կգ ընդհանուր քաշով, 147500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2994.75 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-644-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-2/81999-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N ՀԲ/22/6661-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-6/5228-11 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել Հոնգ Կոնգի կառավարության առողջապահության դեպարտամենտի առողջության պահպանման կենտրոնի կողմից օրպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված թեստերի (մեկ տեղ, 0.5 կգ ընդհանուր քաշով, 2 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 56 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ ԵՎ ՍԱՓԱՄ» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-645-Ա
քաղ. երևան**

**«ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵԵՍՏՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-2/81996-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N ՀՔ/22/6660-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-6/5117-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ Ֆրիդա Ջորդանի կողմից «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով որպես օժանդակություն ուղարկված լաբորատոր անտորոշիչ նյութերի և պարագաների (մեկ տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 9739.33 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 231 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-646-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԴՄԻՆԹՈՆԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 3/3.8-2/82370-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 1/06/707-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-6/5372-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Եվրոպայի բաղմինթոնի կոնֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բաղմինթոնի 40 ձեռնարկակի և 31 մարզաշապիկի (2 տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 25 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 240 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բաղմինթոնի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-647-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-2/81997-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1/06/682-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-6/5230-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ավստրիայի Տիրոլի տարածաշրջանի դահուկային սպորտի ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (104 տեղ, 645 կգ ընդհանուր քաշով, 1955 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1800 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-648-Ա
քաղ. երևան**

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-2/82377-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-6/5371-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով Ամերիկայի «Հայ ավետարանի առաքելություն» ոչ առևտրային կազմակերպության կողմից ուղարկված բեռը (2252 տեղ, 24450 կգ ընդհանուր քաշով, 26187.28 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 7179.28 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի NN Մ-177-Ա և Մ-182-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի NN Մ-042-Ա և Մ-043-Ա, ապրիլի 19-ի N Մ-231-Ա (2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-585-Ա որոշման խմբագրությամբ) և 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-566-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (բեռի և բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

TRLU 571150-2 բեռնարկի բեռի և բաշխման ցանկ

Բեռի արժեքը կազմում է 19008 ԱՄՆ դոլար, տրանսպորտային ծախսերը՝ 7179,28 ԱՄՆ դոլար, քաշը՝ 24450 կգ, տեղերի քանակը՝ 2252:

4/11.12

Ապրանքի անվանումը	Քանակը ըստ չափման միավորի	Ընդհ. քաշը /կգ/	Արժեքը \$	ՀՀ ԿԲԾՀԳ որոշումները և շահառուները
Տախտակ	22 մ ³	10800	4690	22 հուլիսի 2011 թ. Մ-566-Ա
Ֆաներա	2 մ ³	940	642	«Մարալիկ» համայնքային կենտրոն
Տախտակ	23 մ ³	11400	4913	19 ապրիլի 2011 թ. Մ-231-Ա
Ֆաներա	3 մ ³	360	963	«Սբ Չակոբ եկեղեցի»
Հագուստ	7 արկղ	81	1027	19 մարտի 2010 թ. Մ-177-Ա Գյումրու թիվ 6 մախակրթարան
Հագուստ	6 արկղ	70	881	18 փետրվարի 2011 թ. Մ-043-Ա
Կոշիկ	32 զույգ	22	330	Գյումրու «ԱՌԴԱ» մախակրթարան
Կահույք	12 կտոր	500	2000	19 մարտի 2010 թ. Մ-182-Ա
Գործիքներ և սարքավորումներ				«Ջեյթուն» ուսումնական կենտրոն
/օգտ/	8 արկղ	110	1211	
Գրքեր	2 արկղ	15	190	
Համակարգիչ և աքսեսուարներ	3 արկղ	13	351	
Արտաքին լուսատուներ	5 արկղ	59	1050	
Երաժշտական գործիքներ	8 կտոր	73	500	
Օրթոպեդիկ պարագաներ	1 արկղ	7	260	18 փետրվարի 2011 թ. Մ-042-Ա Գյումրու «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն
ԸՆԴԱՄԵՆԸ		24450	19008	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-649-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-8-2/82397-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-6/5370-11
եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև
նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի
«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլո-
գիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատ-
ված ծրագրի շրջանակներում՝

1) համակարգչային ցանցային սարքավորում (մեկ տեղ, 6.8 կգ ընդհանուր քաշով,
1050 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են
150 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՏ).

2) անխափան սնուցման սարքեր (8 տեղ, 220 կգ ընդհանուր քաշով, 6147 ԱՄՆ-ի
դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը,
«Զվարթնոց» ՍՏ).

3) համակարգչային սարքավորումներ (մեկ տեղ, 265 կգ ընդհանուր քաշով, 4975.38
բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 409000 դրամ, «ՄՃՓ» ՍՏ).

4) համակարգչային սարքավորումներ (27 տեղ, 3042 կգ ընդհանուր քաշով,
199913.21 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման
ծախսերը կազմել են 3570000 դրամ, «ՄՃՓ» ՍՏ).

5) հատակ մաքրող սարք (մեկ տեղ, 70 կգ ընդհանուր քաշով, 1056 եվրոյին համար-
ժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 188900 դրամ, «Զվարթնոց»
ՍՏ).


6) գլանափաթեթ վարագույրներ (45 տեղ, 337.05 կգ ընդհանուր քաշով, 16526.30
եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 587600 դրամ,
«Զվարթնոց» ՍՏ).

7) տեսաձայնային սարքավորումներ և պիտույքներ (մեկ տեղ, 210.9 կգ ընդհանուր
քաշով, 87689 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ
փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՍՏ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-650-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-2/82129-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-6/5227-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ սիրիահայ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված համակարգիչները (18 տեղ, 8352 կգ ընդհանուր քաշով, 88800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7400 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-651-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-057-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82154-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5156-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր
եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-057-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շողակաթ» հեռուստաընկերություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04715306) 2011 թվականի
հունիսի 21-ին կնքված՝ N WVA/CC/01/FY 11 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է երիտասարդների շրջանում թմրամոլության, հատկապես էժան թմրամիջոցների
տարածումը կանխարգելող 20 թույն տևողությամբ տեսաֆիլմի պատրաստում՝ 4843500
դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-652-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-057-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)**

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82151-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5154-11
եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր
եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-057-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռնարկատեր Արմեն Հասրաթյանի հետ (ՀՎՀՀ՝ 70924328) 2011 թվականի
հունիսի 30-ին կնքված՝ N WVA/ALAV ADP/CM-11/001(LOT 1) պայմանագրում նշված գոր-
ծարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 1650000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-653-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-493-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82149-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5144-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող
«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քսան համայնքների երեխաների համար
քրիստոնեական ամառային ճամբարի անցկացում» ծրագրի մասին» N Մ-493-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն»
ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07900812) 2011 թվականի հունիսի 30-ին կնքված՝ N WVA/ADPTAV/
SC-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամառային ճամբարի
կազմակերպում՝ 17998500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-654-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-933-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի N 758-Ն որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82150-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5155-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն «Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տիեզերական ճառագայթների բաժանմունքին» ծրագրի մասին» N Մ-933-Ա որոշման մեջ և կից ծրագրում «Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» բառերը փոխարինել «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» բառերով:

2. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2011 թվականի հուլիսի 19-ին կնքված՝ N NFSAT 01/08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հրատարակչական նյութերի տպագրում՝ 500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-655-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/82437-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-4/5376-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի
ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն
կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործա-
կան ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող
«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում»
ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունեն գգալի նշանակություն՝

1) «Հորիզոն - 95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի հուլիսի 22-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ստորգետնյա ավտոկայա-
նատեղիի շինարարության աշխատանքների իրականացում՝ 29137210 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝
01550435) 2011 թվականի հուլիսի 22-ին կնքված՝ N 12/07/11 պայմանագրում նշված գործար-
քը, որով նախատեսվում է ստորգետնյա ավտոկայանատեղիի ինժեներական մասի նախա-
գծային աշխատանքների իրականացում՝ 7056000 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 օգոստոսի 2011 թվականի N Մ-656-Ա
(Որոշումն ընդունվել է 2011 թվականի օգոստոսի 5-ին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N Մ-501-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/82423-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-4/5374-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***


1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Քոնսարք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862808) 2011 թվականի հուլիսի 1-ին կնքված՝ N 01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է զբոսայգու շատրվանների վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 9035481 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Aquarius» ՍՊԸ-ի հետ (Haroun street, Zalka-Metn P.O.Box. 90036 Jdeideh - Lebanon) 2011 թվականի հուլիսի 12-ի N PRO 11.0693 փոխանցման հաշվով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է դիզայնի և աշխատանքների իրականացում՝ 2750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-657-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/82421-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-4/5375-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական
հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասար-
դական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրակա-
նացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քոնսարք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862808) 2011 թվականի հուլիսի 11-ին կնքված՝
N 02/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կինոսրահի պրոյեկտորի
համար տուփի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 481041
դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-658-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-492-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-
ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3/3.8-1/82470-11 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3/3-
4/5413-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից
իրականացվող «Ամառային ճամբար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի քաղաքի և մարմաշեն ու Հովունի գյուղերի 600 երեխաների համար» ծրագրի
մասին» N Մ-492-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «27600000 դրամ» բառերը փոխարինել «27751800 դրամ»
բառերով.


2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «27600000 դրամ» բառերը
փոխարինել «27751800 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին
կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմավ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05511726) 2011 թվականի հունիսի 30-ին կնքված՝
N WVA/GYUMADP/SC-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 600
երեխայի ամառային հանգստի կազմակերպում՝ 27751800 դրամի չափով, առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-659-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-504-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-
ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3/3.8-1/82472-11 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3/3-
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կրթական կենտրոնի կառուցում՝ 1 622 891 860 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Վ.Համբարձումյան 10 շենք, 22 բն., ԳՎՀՀ 00250089), պայմանագիր թիվ 08Ը/011, կնքված 27.05.2011թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է կառուցել կրթական կենտրոն՝ 38 մնջասեյակներ և 7 լսարաններ, մեծ հանդիսությունների դահլիճ, վարչական սենյակներ և Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի բանգարանային սրահ: Կառույցը կազմված է մեկհարկանի հին հարկմյան հիվանդանոցի մասնաշենքից և մեկ ընդհանուր բակի շուրջը պարագծով փակող նոր երկհարկանի երեք մասնաշենքերից: Ամբողջ կառույցը հատակագծով 60մx54մ չափերի է, առավելագույն բարձրությունը 8մ: Կառույցը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե կոնստրուկցիաներով, Արմավիրի տուֆ քարի նրսնապատմամբ, իսկ տանիքը պղնձե փեթղով:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Գազի ծախս՝ 90 000 000 ՀՀ դրամ, որից 2012թ. – 45 000 000 դրամ, 2013թ. – 45 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ, պայմանագիր թիվ 10002082749, կնքված 03.01.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայռուսգադարտ» ՓԲԸ Էջմիածնի ԳՎՄ-ի միջև: Կազմակերպական ծախսերը կազմում են ծրագրի ընդհանուր բյուջեի 5,25%-ը:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ճուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝
Մարինե Ղազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 663 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԿՐՏԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-1/81983-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի 20-ի N 01/4451-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N 01/13.2/3539-11, Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5115-11 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2011 թվականի հուլիսի 25-ի N 01/04.2/2244-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 30.483.830 դրամ արժողությամբ «Մկրտարանին կից տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (<ՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն» ՍՊԸ-ի հետ (<< քաղ. երևան, Ա. Ավետիսյան 118, <ՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի հունիսի 23-ին կնքված՝ N 09Ծ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մկրտարանին կից տարածքի բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 30.483.830 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Սկրտարանին կից տարածքի բարեկարգում
ԾՐԱԳԻՐ

11/3

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Սկրտարանին կից տարածքի քայքայված սալահատակը քանդել և նոր բազալտե սալերով մայթ պատրաստել
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով ջգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործող (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6	Ծրագրի բյուջեն	30 483 830 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռը և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	20 հուլիսի 2011թ. – 31 դեկտեմբերի 2011թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Սկրտարանին կից տարածքի բարեկարգում՝ 30 483 830 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Նորոգման աշխատանքներն իրականացվում են «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Ա.Ավետիսյան 118, ՀՎՀՀ 00801721), պայմանագիր թիվ 09Ծ/011, կնքված 23.06.2011թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Սկրտարանին կից տարածքի 400քմ հին սալահատակը քանդել և նոր բազալտե սալահատակ պատրաստել՝ 30 483 830 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական ծախսերի և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարյան

Ֆինանսական բաժնի տնօրեն
Մարինե Ղազարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 670 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԸ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՏ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ
«ՃԱՂԱՇԱՐԵՐԻ ԵՎ ԴԱՐԱՊԱՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-1/81980-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի 20-ի N 01/4448-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N 01/13.2/3541-11, Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-4/5113-11 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2011 թվականի հուլիսի 25-ի N 01/04.2/2247-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 8.863.280 դրամ արժողությամբ «Ճաղաշարերի և դարպասների պատրաստում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) անհատ ձեռնարկատեր Հավհաննես Կասաբյանի հետ (ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ոսկեհատ, 1144, ՀՎՀՀ՝ 52172178) 2011 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 11Շ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք ամսվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական շենքի հյուսիսային ճակատի նկուղային հարկի պատուհանների ճաղաշարերի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2.022.080 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) անհատ ձեռնարկատեր Հավհաննես Կասաբյանի հետ (ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ոսկեհատ, 1144, ՀՎՀՀ՝ 52172178) 2011 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ N 13Շ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 40 օրվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական շենքի երթանցների մետաղական երեք դարպասների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6.841.200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ԲԵՐՈՒՄ
ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՐԵ ԷՋՄԻԱԾՆԻ ՊԻԱՍԱՊԵՏ
Տ. ԱՐԵՎԵԼԻԱՆՈՒԹԱՆ ԽԱՐԱՏՐԱՅԱՆ ԿՈՂՄԻՑ
« 19 » 11/2011թ.

Ճաղաչարների և դարպասների պատրաստման և տեղադրման
Ծ Ր Ա Պ Ի Ր

11/4

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական շենքի նկուղային հարկի պատուհանների և մասնաշենքերի կամարածև մուտքերի համար պատրաստել և տեղադրել ճաղաչարներ և դարպասներ
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6	Ծրագրի բյուջեն	8 863 280 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռի միաբանները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	25 հուլիսի 2011թ. – 30 հոկտեմբերի 2011թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է մետաղյա ճաղաչարների և դարպասների պատրաստում և տեղադրում միաբանական շենքի նկուղային հարկի պատուհաններին և մասնաշենքերի կամարածև մուտքերին՝ 8 863 280 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքներն իրականացվում են Ա Ձ Հովհաննես Կասաբյանի կողմից (ՀՀ Ամալիի մարզ, գյուղ Ռսկեհատ, 1144, վկայական 01Ա140917, ՀՎՀՀ 52172178), պայմանագրեր թիվ 11Ը/011՝ կնքված 20.06.2011թ., 2022080 դրամով (ճաղաչարներ), և թիվ 13Ը/011՝ կնքված 11.07.2011թ., 6841200 դրամով (դարպասներ):
10	Չեղբ բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական շենքի նկուղային հարկի 39 պատուհանների համար պատրաստել և տեղադրել ճաղաչարներ, իսկ միաբանական շենքի 3 կամարածև մուտքերի համար պատրաստել և տեղադրել դարպասներ, 8 863 280 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության և Էջմիածին քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

Գլխավոր ճարտարապետ
Արտավազ Լազարեյան

Ֆինանսական բաժնի տնօրեն
Սարինե Ղազարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ. 671 -Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ
ՆԵՐՍԵՍ ՄԵԾ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 3/3.8-1/81995-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի 20-ի N 01/4446 -11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-4/5244-11 եզրակացույթները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 25.597.063 դրամ արժողությամբ «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) օդի ֆիլտր (մեկ տեղ, 160 կգ ընդհանուր քաշով, 3.750.45 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 57 եվրո, ՄՃԳ ՏՄ):

2) պրեսգրանիտ, մինի հեռախոսակայան, խողովակներ և կցամասեր (249 տեղ, 15.475 կգ ընդհանուր քաշով, 62.624 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, «Արարատյան» ՏՄ):

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՏԻ
S. ԱՐԵՎԵԿԵՐԻՍԿՈՂՈՍ ԿԱԶՄՈՐԾԱՆԻ ԿՈՂՄԻՏԵ
«11» 11/11/11 2011թ.

«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորման
Ծ Ր Ա Գ Ր Ի

1	Ծրագրի նպատակը	«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի համար ներկրել և տեղադրել սարքավորումներ, կահույք և անհրաժեշտ շինարարական նյութեր՝ հիվանդանոցը ժամանակակից և բարձրակարգ պայմաններով ապահովելու նպատակով:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործող (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Գր. Ներսիսյան փողոց թիվ 19
6	Ծրագրի բյուջեն	25,597,063 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռ և «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	25 հուլիսի 2011թ. – 31 օգոստոսի 2012թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է արտերկրից Հայաստան ներմուծել սարքավորումներ, կահույք և շինարարական նյութեր «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի նորոգման, կահավորման և տեխնիկական վերազինման համար: Ներկրված ապրանքատեսակները ձևակերպվել են Արարատյան Տ/Ս-ում, C15093, առ 27.05.2011թ., և ՄԵՓ-ում, C4590, առ 27.05.2011թ. /կից փաստաթղթեր/ Այս ծրագրի շրջանակներում նոր բեռներ ստացվելու դեպքում դրանք կներկայացվեն որպես հարակից գործարք:
10	Զեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հայաստան ներկրել հիվանդանոցի համար անհրաժեշտ սարքավորումներ, կահույք և շինարարական նյութեր:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և «Այգեծոր» ՄՊԸ-ի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ համեմատողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի մարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

Գլխավոր ճարտարապետ
Արտավազ Նազարբեյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝

Մարինե Ղազարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 6 7 2 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ (N2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 22-ի N 3/3.8-2/82065-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N ՀՔ/22/6738-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 8/02.3/1406-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2011 թվականի հուլիսի 22-ի N 02-Մ-42 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 21-ի N ԱԱ/3-6/5143-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (տեխնեցիոմի գներատոր (99Mw/99m Tc), 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 259.9 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 673 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2011 թվականի հուլիսի 29-ի N 07/07.1/4954-11, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N3/3.8-2/82225-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-6/5231-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել անհատ բարերար Արմեն Վարդանի Սարգսյանի միջոցներով Գերմանիայից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի («Book 2Net Kiosk Production Scanner» տիպի 2 սկաներային համակարգ, 2 տեղ, 150 կգ ընդհանուր քաշով, 39940 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 674 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-2/82222-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25 -ի N ԱԱ-1/3-6/5221-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել բարերարներ՝ Արմեն և Միմի Հարությունյանների միջոցներով Չինաստանից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ ասեղ-նագործական մեքենա (3 տեղ, 1812 կգ ընդհանուր քաշով, 9531 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Ս) ներմուծման ծրագիրը, որն անհատույց հանձնվելու է Մայր Աթոռի դերձակատանը:


2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 675 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-282214/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 26-ի N ԱԱ-1/3-6/5259-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Չեխիայից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ օդորակիչի մասեր (մեկ տեղ, 2.5 կգ ընդհանուր քաշով, 45 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 71 եվրո, ՄՓԱՍԱՓԱՄ Մ/Տ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է նոր Մատենադարանի և ձեռագրատան շենքի համար:


2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 676 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 5)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-2/82215-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 26 -ի N ԱԱ-1/3-6/5258-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**


1. Բարեգործական որակել Ֆրանսիայից՝ Ֆրանսիայի և Լիոնի հայոց թեմի միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ նկարներ (մեկ տեղ, 49 կգ ընդհանուր քաշով, 1800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 623 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Արշիլ Գորկու թանգարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 677 -Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱ-
ՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի հուլիսի 26-ի N 3/3.8-2/82226-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ/3-6/5225-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Commercial Shojai» IMP-EXP կազմակերպությունից ձեռք բերված ստորև նշված բեռնաքանակ մետաղյա պահարանները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) 747 տեղ, 17920 կգ ընդհանուր քաշով, 80988.70 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2300 ԱՄՆ-ի դոլար.


2) 652 տեղ, 12960 կգ ընդհանուր քաշով, 57125.20 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2300 ԱՄՆ-ի դոլար.

3) 458 տեղ, 11960 կգ ընդհանուր քաշով, 54559.80 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 1800 ԱՄՆ-ի դոլար:

Բեռների մաքսային ձևակերպումները կատարվելու են Արարատյան տարածաշրջանային մաքսատանը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 678 -Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-2/82216-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ/3-6/5233-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից «Էլֆնետ գրուպ» ընկերությունից ձեռք բերված սպրինկլերային ջրային հրդեհամարման համակարգի ապրանքները (2 տեղ, 568 կգ ընդհանուր քաշով, 37019.64 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 4338.41 ԱՄՆ-ի դոլար, ՄՃՓ ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի Մ- 679 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-1/82224-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N ՀՔ/22/6763-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ/3-6/5229-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Շվեյցարիայի «ՍԵՄՈՒ» հիմնադրամի կողմից Ամերիկայի Միացյալ Հայակական հիմնադրամի միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները, լաբորատոր ախտորոշիչ նյութերը և դեղորայքը (2680 կգ ընդհանուր քաշով, 46619.58 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7486 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի Մ- 680 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ»
ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 3/3.8-1/82278-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 28-ի N ՀՔ/22/6861-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-6/5373-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Բելգիայի «ՆԱՖ» ասոցիացիայի կողմից «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ախտորոշիչ լաբորատոր ազդանյութերը (1 տեղ, 2.50 կգ ընդհանուր քաշով, 2526.44 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 99 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵԱՍՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Ր
5 օգոստոսի 2011 թվականի N Մ- **681** -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2011 թվականի հուլիսի 27-ի N3/3.8-2/82281 -11, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 27-ի
N ՀՔ/22/6776-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամոսների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ-1/3-6/5232-11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Ր** է.

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայա-
ստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (62 տեղ, 1084 կգ
ընդհանուր քաշով, 73890.38 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3823.56
եվրո, ցանկը կցվում է: «Հվարթենց» ՍՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010
թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության
հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն
տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի
Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն,
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե,
Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

11/11.9

Ստացվող բնի գանկ
**համաձայն N 90867, 90866, 90738, 90737, 90868, 89229, 88280, 89756, 89228, 89338, 90977, 88722,
88320 հաշիվ-ապրանքագրերի**

№	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	Ֆինկի օքսիդ, 10%, քառ. 100 գ., պարկուճ	10	11.80
2	ՀԻՂԻՆԱԼԱԶԻՆ, 20 մգ, փոշի, սրվակ	10	7.98
3	Ներարկման ջուր, 10 մլ, պլաստիկ սրվակ	1800	137.16
4	Գլյուկոզա հիպեր, 50%, 50 մլ, շշիկ	20	11.20
5	Դեքսամետազոն ֆոսֆատ, 4 մգ/մլ, 1 մլ, սրվակ	100	14.52
6	Էպինեֆրին (ադրենալին) 1մգ/մլ, 1մլ, սրվակ	100	32.42
7	ԴԻԿԼՈՖԵՆԱԿ նատրիում, 25 մգ/մլ, 3 մլ, սրվակ	200	29.04
8	Պիրիդոքսին (վիտամին B6), 10 մգ, դեղահատ	7000	42.00
9	Ֆիտոմենտադին (վիտամին K), 10 մգ/մլ, 1 մլ, սրվակ	40	38.64
10	Օրալ ռեհիդրատացիոն աղ (ORS), 20.5 գ/լ դեղապարկ	300	18.78
11	Բզոստրեխտ դինիտրատ, 5 մգ, ենթալեզվային դեղահատ	120	8.04
12	Էրուպրոֆեն, 400 մգ, դեղահատ	1000	9.09
13	Սալբուտամոլ, 200 փչոց, 0.1մգ/փչոց, ինհալատոր	23	32.20
14	Մետրոնիդազոլ, 250 մգ, դեղահատ	1000	7.64
15	Ուարադետամոլ (ադետամինոֆեն), 500 մգ, դեղահատ	1000	9.68
16	Կարբամազեպին, 200 մգ, դեղահատ	1000	23.27
17	Սոլյուխիտամին, դեղահատ	10000	65.90
18	Կոտրիմոքսազոլ, 400 մգ/80 մգ, բաժանվող դեղահատ	2000	17.62
19	Լեոթիոքսինի, 0.025 մգ, դեղահատ	210	3.71
20	Լոպինավիր (ԼՊՎ) 200 մգ / Ռիտոնավիր (ր) 50 մգ, դեղահատ, ջերմակայուն	120	33.03
21	Ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ, 500 մգ, դեղահատ	200	7.92
22	Ֆիդոլուդին (AZT), 300 մգ/Լամիվուդին (3TC), 150 մգ, դեղահատ	60	7.71
23	Շնչառական պաշտպանիչ դիմակ (Քիմբերլի-Գրարկ) միջին	770	341.22
24	Ձեռնոցներ վիրաբուժական, լատեքս, միանվագ օգտ., ստերիլ, զույգ, 7	11	2.86
25	Ասեդ, միանվագ օգտ., Լուեր, 23 G (0.6 x 30մմ) կապույտ, Ե/մ, մ/մ մանկական	5100	72.93
26	Ներարկիչ, միանվագ օգտագործման, Լուեր, 5 մլ	5000	134.00
27	Պոլիէթիլենային տուպրակ դեղերի համար, 6 x 8 սմ	6000	9.54
28	Անձեռոցիկ թանգիֆե, 10 սմ, 12 շերտ, 17 կապ, ոչ ստերիլ	1500	28.20
29	Անձեռոցիկ թանգիֆե, պարաֆինե, 10 սմ, 12 շերտ, 17 կապ, ոչ ստերիլ	20	3.00
30	Ռենտգեն ֆիլմում, փոշի 22.5լ-ի համար	1	11.62
31	Կաշող ժապավեն, ռուլոն, 2 սմ x 5 մ	15	4.95
32	Ասեդ, միանվագ օգտ., Լուեր, 21 G (0.8 x 40մմ) կանաչ, ներմկանային	1800	26.28
33	Տարա, ասեդների/ներարկիչների, 5լ, հրկիզվող	10	15.90
34	Պահպանակ, միանվագ օգտագործման	3500	101.85
35	Ձեռնոցներ վիրաբուժական, լատեքս, միանվագ օգտ., ստերիլ, զույգ, 7.5	5	1.30
36	Քլոր, 1 գ (NaDCC/դիքլորիդացիոն նատրիում 1.67 գ), դեղահատ	6000	194.40
37	Ֆինկի օքսիդ, 10%, քառ. 100 գ., պարկուճ	5	5.90
38	Ներարկման ջուր, 10 մլ, պլաստիկ սրվակ	3700	281.94
39	Դեքսամետազոն ֆոսֆատ, 4 մգ/մլ, 1 մլ, սրվակ	100	14.52
40	Անոպինի սոլյուսիոն, 1 մգ/մլ, 1 մլ սրվակ	100	23.14
41	Դիկլոֆենակ նատրիում, 25 մգ/մլ, 3 մլ, սրվակ	200	29.04
42	Պիրիդոքսին (վիտամին B6), 10 մգ, դեղահատ	3000	18.00
43	Ալյումինումի հիդրօքսիդ 400 մգ/մագնեզիումի հիդրօքսիդ 400 մգ, դեղահատ	1000	19.41



11/11.9

✓

44	Լուսերամիդ, 2 մգ, դեղահատ	1000	12.00
45	Ֆիտոմենադին (վիտամին K), 10 մգ/մլ, 1 մլ, սրվակ	45	43.47
46	Պրոմեթազինի հիդրոքլորիդ, 25 մգ, դեղահատ	2000	22.10
47	Իբուպրոֆեն, 400 մգ, դեղահատ	2000	18.18
48	Լուպինավիր (ԼՊՎ) 200 մգ / Ռիտոնավիր (ր) 50 մգ, դեղահատ, 9երմակայուն	240	66.06
49	Սալբուտամոլ, 4 մգ, դեղահատ	1000	6.41
50	Սալբուտամոլ, 200 փչոց, 0.1 մգ/փչոց, ինհալատոր	41	57.40
51	Կոտրինոբազոլ, 400 մգ /80 մգ, բաժանվող դեղահատ	1000	8.81
52	Մետրոնիդազոլ, 250 մգ, դեղահատ	1000	7.64
53	Ակտիվացած ածուխ, 200 մգ, դեղապատիճ	450	66.00
54	Դիպերիդոլ, 1 մգ, դեղահատ	540	17.10
55	Օրալ ռեհիդրատացիոն աղ (ORS) ցածր օսմոլ, 20.5 գ/լ դեղապարկ	200	12.52
56	Օմեպրազոլ 20 մգ, դեղապատիճ	2604	195.30
57	Պարացետամոլ (ացետամինոֆեն), 500 մգ, դեղահատ	1000	9.68
58	Օնդանետրոնի հիդրոքլորիդ, 8 մգ, դեղահատ	650	356.20
59	Մոլոտիվիտամին, դեղահատ	5000	32.95
60	Մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ, 10 մգ, դեղահատ	4000	65.96
61	Պիրիդոքսին (վիտամին B6), 50 մգ, դեղահատ	20000	152.80
62	Դիգոքսին, 0.25 մգ, դեղահատ	196	8.89
63	Ֆիարոֆոբոսացինի հիդրոքլորիդ, 500 մգ, դեղահատ	200	7.92
64	Կարբամազեպին, 200 մգ, դեղահատ	1000	23.27
65	Զիդովուդին (AZT), 300 մգ/Լամիվուդին (3TC), 150 մգ, դեղահատ	120	15.42
66	Լարան, էլաստիկ, 100 x 1.8 սմ	14	11.48
67	Շնչառական պաշտպանիչ դիմակ, N95 (Քիմբերլի-Կլարկ) միջին	1295	573.87
68	Ներարկիչ, միանվագ օգտ., Լուեր, 10 մլ	100	3.94
69	Ասեդ, միանվագ օգտ., Լուեր, 23G (0.6 x 30 մմ), կապույտ, ե/մ, մ/մ մանկական	3200	45.76
70	Տարա, ասեդների/ներարկիչների, 5լ, հրկիզվող	140	222.60
71	Պահպանակ, միանվագ օգտագործման	2500	72.75
72	Անձեռոցիկ թանգիֆե, պարաֆինե, 10 սմ, 12 շերտ, 17 կապ, ոչ ստերիլ	800	15.04
73	Ձեռնոցներ, գենման, լատեքսյա, միանվագ օգտ., փոշով չպատված, միջին չափս	3000	90.90
74	Ձեռնոցներ, գենման, լատեքսյա, միանվագ օգտ., փոշով չպատված, փոքր չափս	3500	106.05
75	Ասեդ, միանվագ օգտ., Լուեր, 21 G (0.8 x 40մմ) կանաչ, ներմկանային	1600	23.36
76	Ներարկիչ, միանվագ օգտ., Լուեր, 5 մլ	7700	206.36
77	Ներարկիչ, միանվագ օգտագործման, Լուեր, 20 մլ	100	5.49
78	Կայտղ ժապավեն, ռուլոն, 2 սմ x 5 մ	8	2.64
79	Քլոր, 1 գ (NaDCC/դիքլորիդացիոն նատրիում 1.67 գ), դեղահատ	3000	97.20
80	Ֆուրոսեմիդ, 10 մգ/մլ, 2 մլ սրվակ	100	13.04
81	Պարոքսետին, 20 մգ, դեղահատ	1008	265.68
82	Ատենոլոլ, 50 մգ, դեղահատ	1000	8.88
83	Ռիֆամպին (RMP), 300 մգ, դեղապատիճ	1700	78.88
84	Մոքսիֆլոքսացինի հիդրոքլորիդ, 400 մգ, դեղահատ	6450	2451.16
85	Ամոքսիցլին 500 մգ/կլավուլանատ 125 մգ, դեղահատ	1000	135.20
86	Ազիտրոմիցին, 250 մգ, դեղապատիճ	96	12.48
87	Ակտիվացած ածուխ, 200 մգ, դեղապատիճ	300	44.00
88	Ֆլուկոնազոլ, 50 մգ, դեղապատիճ	400	21.68
89	Կանամիցինի սուլֆատ, 250 մգ/մլ, սրվակ	400	996.40
90	Ռիֆամպին (RMP), 300 մգ, դեղապատիճ	1500	69.60
91	Պրոտիոնամիդ, 250 մգ, դեղահատ	30000	4071.00



11/11.9

✓

92	Ֆիկոսերին, 250 մգ, դեղապատիճ	25200	15082.20
93	Ֆլուկոնազոլ, 50 մգ, դեղապատիճ	400	21.68
94	Պարա-ամինոսալիցիկլինային թթու (PAS) 4գ	5010	7842.32
95	Իզոբերմալ արկոլ	1	198.30
96	Պարա-ամինոսալիցիկլինային թթու (PAS) 4գ	10050	15731.60
97	Իզոբերմալ արկոլ	5	175.00
98	Անձեռոցիկ 7.5 սմ, 4 կապ, ոչ ստերիլ	800	3.60
99	Ռենտգենի երևակիչ, փոշի, 22.5	1	10.81
Ընդամենը			73890.38





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 682 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-1/82223-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N ԱԱ 3/3-4/5381-11 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 09104402) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-495-Ա որոշմամբ հստատված ծրագրի իրականացման հետ և դրամ համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՈՎԶԱՎ.» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Ջերմուկ, Շահումյան 11Ա, ՀՎՀՀ՝ 08909995) 2011 թվականի հունիսի 13-ին կնքված N «ՋՍՏԶԱՀ ՊՀ ԱՇՁԲ-02» ծածկագրով պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ջերմուկ Շահումյան և Մյասնիկյան փողոցների խաչմերուկից մինչև Ընպելասրահ տանող տարածքների փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների իրականացում՝ 16.533.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 683 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-644-Ա ԵՎ N Մ-647-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵ-
ՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82115-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 25-ի N ԱԱ/3-4/ 5215-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Սահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Օգնություն դպրոցներին և մանկապարտեզներին» N Մ-644-Ա ու 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Առողջության առաջնային պահպանում» N Մ-647-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Օհանջանյան և ընկերներ» ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 06107704) 2011 թվականի հուլիսի 19-ին կնքված՝ N 19.07.11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ համայնքի ամբուլատորիայի և Նոր Եղեմիա համայնքային կենտրոնի մասնակի վերանորոգման

համար մետաղապլաստե դռների մատակարարում՝ 1974200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 684 - Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82156-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 22-ի N ԱԱ/3-4/5184-11 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է:**


1. Սահմանել, որ «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 01538594) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2011 թվականի հուլիսի 20-ին կնքված՝ թիվ 209 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենայի («Toyota Land Cruiser 78» մակնիշի, 2011 թվականի արտադրության, թափքի համարը՝ JTERB71J500061437) գնում՝ 13 984 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 685 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/82440-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N ԱԱ/3-4/5379-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԼԱՎՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Զաքիյան 8, բն.37, ՀՎՀՀ՝ 02577772) 2011 թվականի հուլիսի 25-ին կնքված N 120-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Կոնդ թաղամասի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարող տարածքում «Հանրային կենտրոն», «Միայնակ մայրերի և երեխաների կենտրոն» և «Լսողության խնդիրներ ունեցող երեխաների կենտրոն» աշխատանքային նախագծերի փորձաքննություն՝ 425 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 օգոստոսի 2011 թվականի N Մ- **686** **-Ա**
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տոբերկուլոգի
կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (2)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2011 թվականի հունիսի 29-ի N ՀԳ/5877-11 և 2011 թվականի
հուլիսի 22-ի N ՍԲ/6666-11 գրությունները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2011 թվականի 6-ի N 3/3.8-1/81149-11 ու Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի
6-ի N ԱԱ/3-4/4663-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի
Հանրապետությունում դեղակայուն տոբերկուլոգի կառավարման ընդլայնում»
դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել
հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման կից ծրագրի 10-րդ կետում «52 833 եվրո» բառերը փոխարինել «42 833
եվրո» բառերով.

2) որոշման կից ծրագրի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր
պարբերությամբ.

«•Խոլերի և դեղերի տեղափոխման համար նախատեսված բեռնափոխադրող
ավտոմեքենա՝ 10000 եվրո»:


2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տոբերկուլոգի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնա-
դրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն

անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեզնա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00083019) 2011 թվականի մայիսի 25-ին կնքված՝
N ՀՀ ԱՆԳ-ՊԸԱՊՁԲ-11/2-01 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով
նախատեսվում է ավտոմեքենայի գնում՝ 4125000 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ- 687 -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/82420-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3/3-4/5405-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բալտիյսկի պրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02250697) 2011 թվականի հուլիսի 21-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի ամբողջական վերջնական մաքրման աշխատանքների իրականացում՝ 1500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 688 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/82419-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 8 -ի N 3/3-4/5406-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՍՏԻ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00848258) 2011 թվականի հուլիսի 20-ին կնքված՝ N 22/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար նշված ապրանքների մատակարարում և տեղադրում՝ 672967 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մետաղ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2011 թվականի հուլիսի 15-ին կնքված՝ N 23 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար մետաղական պատրաստվածքների պատրաստում և տեղադրում՝ 1520000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 օգոստոսի 2011 թվականի N Մ- 689 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 3)
(«Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2011 թվականի օգոստոսի 17-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Սահմանել, որ «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 09104402) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-495-Ա որոշմամբ հստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտաշատի էՑՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, Արտաշատի մարզ, գյուղ Ոստան, ՀՎՀՀ՝ 04201249) 2011 թվականի օգոստոսի 8-ին կնքված N "ՋՍՏՁԱՀ-ԲԸ-ԱՇՁԲ-01/01" ծածկագրով քառակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ջերմուկ քաղաքային համայնքի Շահումյան փողոցի փողոցային լուսավորության հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 131.203.713 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 690 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱԶԻՆԻ ՇՐՋԱՆԻ
ԲԵՐԺՈՐ ԶԱՂԱՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ 1-ԻՆ ՓՈԿԻ ԾԽԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 4-ի 3/3.8-1/82610-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 2-ի N 4707-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3/3-6/5450-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 18445400 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 1-ին փուլի շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ էլեկտրատեխնիկական սարքավորումների ներմուծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ «Կրոն Ստրոյ» կազմակերպությունից ձեռք բերված էլեկտրատեխնիկական ապրանքները (3 տեղ, 6850 կգ ընդհանուր քաշով, 1091200 ռուսական ռուբլի արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 1621000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456)


կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հիդրոմաշմեքվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04420756) 2011 թվականի հունիսի 16-ին կնքված N ՀՋ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդության վարձավճար՝ 1875000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան




«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման I-ին փուլի շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ էլեկտրատեխնիկական սարքավորումների ներկրում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման I-ին փուլի շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ էլեկտրատեխնիկական սարքավորումների ներկրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի քաղաք Բերձոր, ջրամատակարարման բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 18.445.400,00 (Տասնութ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի բնակիչները

Բ/Կ ղ/Կ

7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հունիսի 16-ից մինչև 2011թ.օգոստոսի 16-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀիդրոմաշՍերվիս» ՍՊԸ-ի կողմից. - տեխնիկայի ձեռքբերում և փոխադրում մինչև Բազրատաշենի մաքսակետ՝ 16.570.400,00 (Տասնվեց միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի (ակնկալում ենք մաքսային և հարկային արտոնություններ) - ծառայությունների վարձավճար՝ 1.875.000,00 (Մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամսական հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



Բ/Կ ղ/Կ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ-691 - Ա
քաղ. երևան**

**ՌՈՒՍԱՅ ԼԵՁԿԻ ԱԶԱԿՑՄԱՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ
ԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 13
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 3/3.8-1/82617-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 2-ի N 4706-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 01/13.2/3796-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 3-ի N ԱԱ 3/3-4/5486-11 և ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2011 թվականի օգոստոսի 6-ի N 02/2/3295-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 25000000 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի եղիշե Չարենցի անվան թիվ 13 հիմնական դպրոցի շենքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան հիմնադրամին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



ԱՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան
բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն
Գ. Բարիկյանի կողմից



ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Եղիշե Չարենցի անվան թիվ 13 հիմնական դպրոցի շենքի վերանորոգում


(ներքին հարդարման աշխատանքներ, դռների և պատուհանների ապամոնտաժում և տեղադրում, մանրահատակի ծածկույթի քանդում և հատակի ծածկույթի կառուցում նոր մանրահատակով), կահավորում դպրոցական գույքով և ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած ինտերակտիվ ուսուցման դասարանների բացում

Ծ Ր Ա Գ Ի Բ

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Եղիշե Չարենցի անվան թիվ 13 հիմնական դպրոցի շենքի վերանորոգում (ներքին հարդարման աշխատանքներ, դռների և պատուհանների ապամոնտաժում և տեղադրում, մանրահատակի ծածկույթի քանդում և հատակի ծածկույթի կառուցում նոր մանրահատակով), կահավորում դպրոցական գույքով, ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած ինտերակտիվ ուսուցման դասարանների բացում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների:
3.	Բարեգործը	Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան բարեգործական հիմնադրամ Հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Պոռշյան փող., 1-ին նրբ., տ. 20/14 ՀՎՀՀ՝ 00108015
4.	Ծրագիրը կատարողը	Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան բարեգործական հիմնադրամ Հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Պոռշյան փող., 1-ին նրբ., տ. 20/14 ՀՎՀՀ՝ 00108015

2

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան Կրթության ոլորտ
6.	Ծրագրի բյուջեն	25 մլն դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Եղիշե Չարենցի անվան թիվ 13 հիմնական դպրոց Գտնվելու վայրը՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Չորք թաղամաս, 3 ՀՎՀՀ՝ 0940796
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2011 թ. օգոստոսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը (3 ամիս)
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ներքին հարդարման աշխատանքներ, դռների և պատուհանների ապամոնտաժում և տեղադրում, մանրահատակի ծածկույթի քանդում և հատակի ծածկույթի կառուցում նոր մանրահատակով՝ 10 մլն դրամ Կահավորում դպրոցական գույքով, ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած ինտերակտիվ ուսուցման դասարանների բացում՝ 13 մլն 600 հազար դրամ
10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական նյութեր, դպրոցական գույք, ժամանակակից համակարգչային տեխնիկա
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Գրասենյակի վարձակալության վճարը՝ 150000 դրամ Կոմունալ ծախսերը՝ 50000 դրամ Աշխատակիցների աշխատավարձը՝ 1200000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնաժողով ՀՀ Սյունիքի մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնաժողով Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան բարեգործական հիմնադրամ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 692 -Ա
քաղ. երևան

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 3-ի N 3/3.8-2/82504-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 2-ի N ՀԲ/22/6925-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 2-ի N ԱԱ/3-6/5449-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակել Ամերիկայի «Giving Hope International» հիմնադրամի կողմից Հայ օգնության միության հասցեով ուղարկված դեղորայքի (3 տեղ, 58 կգ ընդհանուր քաշով, 405.42 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 49.30, ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Հայ օգնության միության Ախուրյանի Մոր և մանկան առողջության կենտրոնի համար:

2. Հայ օգնության միությանը՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐԻՍԻՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2011 թվականի N Մ- 693 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 3/3.8-1/82611-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 3 -ի N 3/3-4/5487 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2011 թվականի հուլիսի 20-ին կնքված՝ N 24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքում հեռահաղորդակցության և տեսահսկման համակարգի մոնտաժային աշխատանքների իրականացում՝ 15104710 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 694 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/82152-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 22-ի N ԱԱ/3-4/5159-11 եզրակացությունները,

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.


1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՐԴԱ Կոնստրաքշն Թրեյդ ընդ Թեքնոլոգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2011 թվականի հուլիսի 14-ի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների կատարում՝ 988822 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2011 թվականի N Մ - 695 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ի N Մ-629-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի Հանրապետությունում տուրերկույրդի դեմ պայքարի
ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 3-ի N 3/3.8-2/82500-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ի N 3/3-6/5398-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2011 թվականի հուլիսի 27-ի N 159 գրությունը, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուրերկույրդի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր)» N Մ-629-Ա որոշման 1-ին կետում ««Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն»» և «346.8 կգ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն»» և «413 կգ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2011 թվականի N Մ - 696 - Ա
(Որոշումն ընդունվել է 2011 թվականի օգոստոսի 5-ի նիստին)
քաղ. երևան**

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂ-
ՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 5-ի N 3/3.8-1/82631-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 4812-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 6-ի N 3/3-4/5566-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Բարեգործական որակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող՝ 103500 եվրո, 82454 ԱՄՆ-ի դոլար և 3869000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ֆինանսավորմամբ ձեռք բերված գյուղտնիսնական ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) թևավոր գութաններ, 15 տեղ, 11960 կգ ընդհանուր քաշով, 63280 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 3900 եվրո, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն.

2) ճշգրիտ ցանող մեքենաներ, 25 տեղ, 6516 կգ ընդհանուր քաշով, 73000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 9454 ԱՄՆ-ի դոլար, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն.

3) կուլտիվատորներ լրակազմով և թևավոր գութաններ, 34 տեղ, 6359 կգ ընդհանուր քաշով, 32090 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 4230 եվրո, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 90023094) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2011 թվականի հունվարի 22-ին կնքված N ԳԿ-06-10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդության վարձավճար՝ 2752000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՔԱՐԴ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2011 թվականի մարտի 11-ին կնքված N ԶԴ-03-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդության վարձավճար՝ 932500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության
 հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից
 Վ. Բաղդասարյան «18» հունիսի 2011թ.



**«Աջակցություն ԼՂՀ կարիքավոր հողօգտագործողներին»
 ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել ԼՂՀ կարիքավոր հողօգտագործողներին գյուղտնտեսական անվճար տրամադրելով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններով
3.	Բարեգործը	ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40, ՀՎՀՀ 90023094
4.	Ծրագիրը կատարողը	ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40, ՀՎՀՀ 90023094
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ԼՂՀ բոլոր շրջաններ, ուրտղը՝ գյուղատնտեսություն
6.	Ծրագրի բյուջեն	103 500 եվրո, 82 454 ԱՄՆ-ի դոլար և 3 869 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ԼՂՀ կարիքավոր հողօգտագործողները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	5 տարի՝ 2011թ.-ից մինչև 2016թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը	10 հատ թևավոր գութանի, 4 հատ կուլտիվատորի և 2 հատ ճշտգրիտ ցանող մեքենա՝

	և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	շարքացանի ներմուծում: Բեռի արժեքն է՝ 103 500 եվրո և 82 454 ԱՄՆ-ի դոլար: Միջնորդավճար, «Քարդ ԱզրոՍերվիս» ՓԲԸ-ին՝ 3 869 000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	10 հատ թևավոր գութանի, 4 հատ կուլտիվատորի և 2 հատ ճշտգրիտ ցանող մեքենա՝ շարքացանի ներմուծում: Բեռի արժեքն է՝ 103 500 եվրո և 82 454 ԱՄՆ-ի դոլար: Միջնորդավճար, «Քարդ ԱզրոՍերվիս» ՓԲԸ-ին՝ 3 869 000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հիմնադրամի վերահսկողության բաժնի կողմից և սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով